ConverseBank

Մայրության քարտ
Պլաստիկ քարտի տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 23.04.2019թ.

Քարտի անվանում	Մայրության քարտ
Քարտի տեսակ	Դեբետ քարտ
Համակարգ	ԱրՔա
Քարտի գործողության ժամկետ	36 ամիս
Արժույթ	ՀՀ դրամ
Անհրաժեշտ փաստաթղթերն ընունելուց հետո քարտի պատրաստման և տրամադրման հասանելի դառնալու ժամկետը	*Երևան քաղաքում գտնվող մասնաճյուղերի դեպքում՝* առավելագույնը 5 աշխատանքային օր *Երևան քաղաքից դուրս գտնվող մասնաճյուղերի դեպքում՝* առավելագույնը 10 աշխատանքային օր Քարտն ակտիվանում է 1 օրվա ընթացքում
Սահմանափակում	Գործում է միայն ՀՀ սահմաններում

Նախապայմաններ
Որպես քարտապան կարող է հանդես գալ՝ ▪ Երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը տնօրինելու իրավունք ունեցող ծնող, որդեգրող կամ խնամակալ ▪ Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող ծնող, որդեգրող կամ խնամակալ ▪ Չաշխատող կին, ում նշանակվում և վճարվում է մայրության նպաստը ▪ Այն անձը, ում բանկային հաշվին կարող է ամսական 25 000 ՀՀ դրամ գումար փոխանցվել պետական աջակցության հաշվից

Դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	4%

Տարեկան տոկոսային եկամտաբերություն
Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ **$APY=(1+r/n)^n-1$** որտեղ՝ 1) APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է: 2) r - տարեկան պարզ տոկոսադրույքն է: 3) n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է Քանի որ տոկոսագումարները կապիտալացվում են եռամսյակը մեկ, տարեկան տոկոսային եկամտաբերությունը կազմում է **4.06%**

Ընդհանուր պայմաններ	
Տրամադրման վճար	0 ՀՀ դրամ
Սպասարկման վճար	1,000 ՀՀ դրամ տարեկան
Գործարք առևտրային կետերում	0 ՀՀ դրամ
Կանխիկացման կետերում և բանկոմատներում կանխիկի տրամադրման միջնորդավճար	Կոնվերս Բանկ՝ 0.1% ԱրՔա համակարգի այլ բանկեր՝ 1%
Քարտային հաշվից կանխիկի տրամադրում՝ առանց քարտը ներկայացնելու	1%
Կանխիկացման սահմանաչափ *Կարող է փոփոխվել հաճախորդի դիմումի համաձայն*	300,000 ՀՀ դրամ օրական 10 անգամ օրական բանկոմատից մեկ գործարք՝ 500,000 ՀՀ դրամ *(ենթակա չէ փոփոխման)*

Բանկի վճարային տերմինալով քարտային հաշվին կանխիկի մուտքագրում		100 - 50,000 ՀՀ դրամ՝ 100 ՀՀ դրամ 50,001 - 200,000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ
Բանկոմատով քարտային հաշվին կանխիկի մուտքագրում		Բանկի բանկոմատով՝ 0.2% ԱրՔա համակարգի այլ բանկի բանկոմատով՝ 0.6%
Բանկի «Վճարային Պորտալ» համակարգով քարտից քարտ փոխանցում	**ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին**	0.5%
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa քարտին	0.5% + (1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)
Բանկի դրամարկղերում, Ինտերնետ և Մոբայլ Բանկ համակարգերով Բանկի քարտապանների քարտից քարտ փոխանցում	**ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին**	0.5%
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa քարտին	0.5% + (1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)
Բանկի բանկոմատներով քարտից քարտ փոխանցում	**Բանկի ArCa, Visa և Mastercard քարտերի համար**	0.5%
	ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտերի համարս	0.3%
Քարտից քարտ (այլ եղանակով) փոխանցում		0.5%
Քարտային հաշվից քաղվածքի տրամադրում օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ, 1 անգամ		0 ՀՀ դրամ
Քարտային հաշվից հավելյալ քաղվածքի տրամադրում օրենսդրությամբ սահմանված պարբերականությունից բացի	**մինչև 3 տարի վաղեմության**	1,000 ՀՀ դրամ
	3 տարի և ավելի վաղեմության	3,000 ՀՀ դրամ (Բանկում պահպանված լինելու դեպքում)
Վճարային սահմանաչափի գերազանցման դեպքում գերազանցող գումարի նկատմամբ կիրառվող տույժ		Գերազանցող գումարի 0.13%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար
Կորցրած /գողացված/ վնասված քարտի և ծածկագրի փոխարեն նոր քարտի և ծածկագրի տրամադրում		2,000 ՀՀ դրամ
Նոր քարտի դիմում-հայտի կամ գործող քարտի վերաթողարկման դիմումի դեպքում քարտի և ծածկագրի տրամադրում նույն օրվա ընթացքում		3,000 ՀՀ դրամ
Հետգանձման անհիմն հայտի ներկայացում		1,000 ՀՀ դրամ
Քարտին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ կամ USSD հարցման պատասխան SMS հաղորդագրության ուղարկում (ներառյալ ԱԱՀ)		ՀՀ բջջային օպերատոր՝ 20 ՀՀ դրամ Արտերկյա բջջային օպերատոր՝ 40 ՀՀ դրամ
Քարտի ապաբլոկավորման վճար 3 անգամ սխալ ՊԻՆ մուտքագրելու դեպքում		500 ՀՀ դրամ

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Դիմում – հայտ
2. Անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշ կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)
3. Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Ուշադրություն
ՀՀ առևտրային բանկերից ԱրՔա համակարգի անդամ չի հանդիսանում ՎՏԲ-Հայաստան բանկը:
Վճարային սահմանաչափի գերազանցում Վճարային սահմանաչափի գերազանցման դեպքում հաշվարկվում է գերազանցող գումարի նկատմամբ 0.13% օրական տույժ:
Քարտի տարեկան սպասարկման վճարի գանձում Սպասարկման վճարը գանձվում է քարտի տրամադրման պահին՝ ամբողջ տարվա համար: Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում սպասարկման վճարը ենթակա չէ վերադարձման:
Փակված քարտային հաշվի մնացորդ Փակված քարտային հաշվի մնացորդը երեք ամսվա ընթացքում չօգտագործելու դեպքում գանձվում է 1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար: Եթե մնացորդը փոքր է 1,000 ՀՀ դրամ գումարից, ապա գանձվում է ամբողջ մնացորդային գումարը և հաշիվը փակվում է:
Հետգանձման անհիմն հայտ Անհիմն է համարվում հաճախորդի կողմից Բանկին ներկայացված հայտը, որի մեջ նշված տեղեկություն/ներ/ը իրականությանը չի/են/ համապատասխանում:
Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոս Տոկոսը հաշվարկվում է օրվա վերջին դրական մնացորդի նկատմամբ և վճարվում եռամսյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի ավարտից հետո՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:
Քարտային հաշիվը տնօրինելու իրավունք Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Հեռահար կապի միջոցներ

Բանկի ծառայությունները մատուցվում են նաև հեռահար կապի միջոցներով, որոնց պայմանները ներկայացված են հետևյալ հղումներով՝

Converse Առցանց Բանկ / Converse Mobile - https://conversebank.am/hy/internet-banking/
Իմ Կոնվերս - https://conversebank.am/hy/my-converse/
SMS – Converse / USSD - https://conversebank.am/hy/sms-converse-ussd/

Քարտի կորստի/գողացվելու դեպքում

Քարտի կորստի /գողացվելու դեպքում այն արգելափակելու համար հարկավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ հետևյալ եղանակներից ցանկացածով.

1. զանգահարելով Քարտի վրա նշված հեռախոսահամարով,
2. զանգահարելով Բանկ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.
   - ✓ ժամը 9:00-22:00՝ **(+37410) 511-210, 511-211**
   - ✓ շուրջօրյա՝ **(+37410) 545-514**

   Բանավոր դիմումի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:
3. Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝
   զանգահարելով «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ **(+37410) 592-222** հեռախոսահամարով:
4. ուղարկելով համապատասխան գրավոր հաղորդագրություն card@conversebank.am էլ. հասցեով
   կամ **(+37410) 511-212** ֆաքսով
5. ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերելու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին ամենաուշը 1 բանկային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին:

Գործարքի բողոքարկում

Քաղվածքում գործարքի հաշվեգրման պահից 60 օրացուցային օրվա ընթացքում Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը կարող են չդիտարկվել Բանկի կողմից: Գործարքի բողոքարկման համար հարկավոր է պահպանել գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը:
Հայտը հասանելի է Բանկում, ինչպես նաև հետևյալ հղումով՝ https://conversebank.am/hy/all-forms/

Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները

Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները ներառում են Քարտի օգտագործման, պահպանման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ կարևոր դրույթներ:
Կանոնները հասանելի են հետևյալ հղումով՝ https://conversebank.am/hy/cards/

Բանկոմատներ և կանխիկացման կետեր

Բանկի բանկոմատների ցանկ՝ https://conversebank.am/hy/atms/
Բանկի մասնաճյուղերի ցանկ՝ https://conversebank.am/hy/branches/

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6
Հեռախոս՝ (+37410) 58-35-14, (+37410) 59-26-64

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:
Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Էլ. փոստ՝ info@fsm.am
Հեռախոս՝ (+37460) 70-11-11
Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի https://www.conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber ՝ +374 95 511 211
- Skype ՝ conversebank-callcenter